ՀՏԴ 809. 198. 1. Հայոց լեզու, ոճագիտություն

ՇՐՋԱՍՈՒՅԹԸ ԿՈՄԻՏԱՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *Շրջասույթ, շրջասություն, դարձված, գեղարվեստական խոսք, չափածո, արձակ, հուշագրություն, հոմանիշ, նույնանիշ, համանիշ, հականիշ, նույնանուն, գոյական, բայ, ծավալուն, սեղմ, ինքնարնութագրական շրջասույթ:*

Ключевые слова*- авторские структуры, глагол, катахрез, мемуар, перифраз, проза, синонимические отношения, сушествительные.*

Key words*- catachresis, memory, neologism, noun, paraphrase, poetry, prose, phraseological collocations, structure, synonymous relation, verb.*

ПЕРИФРАЗЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ КОМИТАСА АКОПЯНА

С.МИНАСЯН

В статье исследованы перифразы использованные в поэзии К. Акопяна, которые доминируют в сравнении с прозой, т.е. мемуаров.

Эти единицы относятся не к общепринятому пласту, а являются авторскими структурами, можно сказать неологизмами. Исследованные нами сочетания имеют как обширные, так и небольшие стуктуры. Они построены на основе катахреза. Есть перифразные единицы, которые состоят в синонимических отношениях.

Эти структуры имеют значения сушествительных и глаголов.

THE PARAPHRASE IN THE CREATION OF KOMITAS HAKOBYAN

S.MINASYAN

The article deals with paraphrases used from K. Hakobyan. These phraseological collocations dominate in his poetry as compared to prose: memoris.

These units are not productive . The author has created a new structures, they are neologisms.

There are so long phrases, so small. They are built on the basis of catachresis.

Created unites even are in synonymous relation. The structures have value of noun and verb.

Շրջասույթները (շրջասությունները) Կոմիտաս Հակոբյանի չափածոյում գերիշխող են, իսկ արձակում՝ հուշագրությունում, քիչ: Նրանց մերձ *դարձվածները* սակավ են: Կ. Հակոբյանը գործածել է ոչ թե միայն *հանրածանոթ շրջասույթներ*, այլ ստեղծել է նաև *կայուն,հեղինակային* նորը: Շրջասույթները ծավալով մեծ, միջակ ու փոքր կառույցներով են դրսևորվել և գեղագիտական իմաստաբանական բազմազանությամբ ամբողջական միավորով են *այլաբերվել:Շրջասությունների* ձևաիմաստային կիրառություններից հոմանիշներն իշխող են ու առավել շատ վերաբերում են սիրային թեմային, իսկ հականիշն ու նույնանունը սակավ են: Շրջասույթները գոյական ու բայ խոսքի մասերով են գործառվել:

ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ
(ազատամարտիկ, ուսանող-ուսուցիչ, ստեղծագործող Կ. Հակոբյան-45)
Ինձ կհիշեք այսպես՝
Երազկոտ ու մոլոր: (ԳՊ, 14, Ն, 30)[1]

[1]Հակոբյան Կոմիտասի երկու ստեղծագործությունների անվանումները կրճատ գրությամբ են ներկայացված էջանշումի թվերի մոտ, ԳՊ՝ «Գոյության պատրանք», Արցախ հրտրկչ., Ս., 1993 թ., 48 էջ, Ն՝ «Նվիրում», Ե., 1997 թ., 76 էջ:

Կ. Հակոբյանը (1972-1994) արցախյան այն ստեղծագործողներից էր, որ իր ուսանողական կյանքը և գեղագիտական նվաճումների ծաղկուն ուժը մեկտեղեց հայրենիքի համար մղվող ահազարհուր գոյապայքարին: Այդ գերհամեստ ու համարձակ անձնավորությունն ուշադրության արժանի վեհանձն ու անպարփակ գեղագետ էր: Արցախյան ԳՄ ղեկավար Վ. Հակոբյանը նշել էր՝ «…քո իսկ բառերով՝ աստվածներն են հորինել: Հավատում էինք դրան բոլորս: Երբ Ստեփանակերտի փողոցներում հանդիպում էինք, դու քաշվելով մոտենում էիր ու, ասես, քո բանաստեղծության չբացված երակների ոսկին էիր պարզում պատանեկան ամոթխածությանդ մեջ[1]»: Առինքնող է Կոմիտաս Արսենի Հակոբյանի գեղագիտական խոսքը: Դեռ ուսանող էր (1989-1994), որ հրատարակեց բանաստեղծությունների առաջին գիրքը: Այդ գրքի վերաբերյալ իր դասախոս լեզվաբան-ոճաբան խոնարհ ծառաս հիացմունքով նույնիսկ շրջասույթների վերաբերյալ նշել էի՝ «*Հակոբյանի պատկերային կառույցների միջուկը շրջասության հավասար բառակապակցություններ են*[2]»: Այնուհետև հրատարակվեց չափածոյի ու արձակի՝ հուշագրության գիրքը[1]: Կ. Հակոբյանի մի բանաստեղծությունում իմաստնացած մարդու երազանք կա:

Օ՜, լիներ մի ձայն,
որ ինձ հաղորդության տաներ աստվածներին:
Ես իմ էությանը կմիախառնեմ
նրանց մոգությունը,
ու կվերադառնամ… ոգեղենացած:
Դրանից հետո
ես կերազեի մի *դիպված*,
որ *իմ վախճանը կնմանեցներ*
աստղային մահվան՝
հաջորդ օրը երևալու
ակնկալությամբ: (ԳՊ, 20, Ն, 35)

Եվ իրոք, անմահ բանաստեղծն աստղի նման հաջորդ օրը երևաց ու առ այսօր երևում է իր գեղագիտական նվաճումներով, որի մասին միայն գիտականորեն կարելի է խոսել: Կ. Հակոբյանը իմաստասիրական (փիլիսոփայական) մտորումներով իր հայրենիքի դառը ճակատագիրն է ցավով ընդհանրացրել, իր ընկերների՝ հանուն հայրենիքի, մատաղ կյանքի կորուստը փաստել, մարդ արարածի ցգացմունքները ընդգծել:

Եվ ահա կոմիտասյան *տողերը* ճիշտ վերլուծել կարելի է վկայակոչելով իր անզուգական պատկերաարտահայտչական գաղտնիքները: Դրանք փորձելով մասնակիորեն վերծանել, երբեմն, պարզ թվացող կապակցությունները մեկնաբանելիս, կարելի է մտորել բազմակողմանիորեն, հատկապես առինքնող ու տարածված *շրջասույթների* շուրջ (*շրջասույթների* թիվը հասնում է մոտավորապես 200-ի, անհարկի շրջասույթները քննադատված են դարեր առաջ): Կ. Հակոբյանի չափածոյում *շրջասույթները* արբշիռ են կիրառված, իսկ արձակում՝ հուշագրությունում՝ քիչ: Այս կապակցությամբ արժե ուշադրություն դարձնել լեզվաբան Պ. Բեղիրյանի նշումին՝ «*Մեր նոր գրականությունը, կարելի է ասել, հեղեղված է շրջասական արտահայտություններով. Իսահակյան, Դուրյան, Տերյան են*[3]»: Եվ ահա կոմիտասյան մոտեցումները դրանց օրգանական շարունակությունն են:Լեզվաբանական բառարանում *շրջասույթ* (անգլ.՝ paraphrase//periphrasis) և *շրջասություն* գիտաբառերը մեկ հասկացությամբ է տրված՝ «*Ոճաբանական հնար, երբ պարզ հասկացություն արտահայտվում է նկարագրական եղանակով, այսինքն՝ առարկայի կամ երևույթի իսկական անվանումը*

[1]Հակոբյան Վ. Ս., «Ամենաբարձր բանաստեղծությունը», Կ. Հակոբյանի «Նվիրում», Ե., 1997 թ., էջ 3:
[2] Մինասյան Ս. Ա., Ջրաբերդ (Մարտակերտի շրջանային թերթ), հոկտեմբեր, 1995 թ.:
[3]Բեղիրյան Պ.Ս., «Հայերեն շրջասույթների բառարան», Էդիթ պրինտ հրտրկչ., Ե., 2006 թ., 316 էջ, էջ 3:

փոխարինվում է նրա այս կամ այն հատկանիշն ընդգծող որևէ դարձվածով[1]»: Ոճագետ Ֆ. Խլղաթյանը *շրջասությունը* և *շրջասույթը* լեզվաբանական տարբերակներով է բնութագրել: Շրջասությունը «*Երևույթների, առարկաների նկարագրական բնութագրումն է ուղղակի անվանման փոխարեն, սովորական բառերի փոխարինումը նկարագրական արտահայտություններով, …Դարձույթ: Շրջասության հետևանքով առաջացած բառակապակցություն կամ նախադասություն, որ օգտագործվում է փոխաբերաբար, փաստերն ուղղակիորեն անվանող բառերի փոխարեն*»:Հետո ավելացրել է տարակուսելին՝ «*Նրանք կարող են լինել ուղղակի և փոխաբերական*[2]»: Սրա մի տեսակը Ֆ. Խլղաթյանըհամարել է՝ *պարզաբանումն*, երբ «*…խոսքի մեջ եղած որևէ հասկացություն կրկնվում է նկարագրական-բացատրական ձևով*[3]»: Օրինակ՝ *օրս, հաշմված օրս*, ավերվի իմ չգոյությունից (*գեղագիտական աշխատանք չկատարելուպահեր*՝հաշմված օրեր (ԳՊ, 26):

Շրջասությունն ու շրջասույթն արդեն արժե նույնը համարել, ինչպես լեզվաբանական հնչույթ և հնչյուն, բառ և բառույթ ևն, նույնիսկ ոճագիտական ոճ, ոճույթ (Լ. Եզեկյանի գործածությունը[4]): Պ. Բեդիրյանը *շրջասություն* գիտաբառը բնութագրել է հետևյալ կերպ՝ «*Շրջասությունները շրջուն արտահայտություններ են,* ***բառեր*** *կամ բառակապակցություններ, որոնցով առարկան կամ գործողությունն անուղղակիորեն ենք անվանում*[5]»: Եթե ուշադիր հետևենք Պ. Բեդիրյանի կանոնարկմանը, ապա կտեսնենք *մեկ բառով* արտահայտված շրջասություն, որը գործածել է բառարանի սկզբում՝ նույն էջում բացատրելիս և սյունակներով տրվող շարքերում: Դա համընդհանուր ճանաչում գտած մարած *փոխաբերություն* է՝ *այլաբերություն*: Այդպիսի բառերից եթե *բրդոտ* ձևը ճանաչվում է նաև *արջի* այլաբերված անվանում, ապա *շլդիկը* սովորական *նապաստակի* բառային *հոմանիշ* է հասկացվում, մարած *փոխաբերությունը* կամ *այլաբերությունն* այլևս չի ընկալվում (բառարանային աշխատանքն է օժանդակում պարզաբանմանը): Այստեղ *շիլ աչք* հասկացությունն ուշադրությունից դուրս է մղված ու սովորական բառի արժեք է ստացել՝ *նապաստակ* (այս ձևը բառարաններում դեռևս առաջնային իմաստով գրանցված չէ[6]:

Շրջասույթը մոտ է դարձվածին, բայց վերջինս ժողովրդախոսակցական բնույթ է կրում, տարբեր խոսքի մասեր են (*շրջասույթը* գոյական ու բայ է) և մեկ բառով դեռևս չի ընկալվում (Լ. Եզեկյանը շրջանցել է *շրջասույթը*[7]):

Կ. Հակոբյանի ստեղծագործություններում սակավ է գործածված դարձվածը, դրան երբեմն ավելացվել է խոսուն բառ, որով այդ կառույցը սերտացրել է շրջասույթին, ինչպես *արցունք թափել* դարձվածից ստեղծել է *շրջասույթ՝ գրիչն* արցունք թափել (ԳՊ, 17)՝ *թախծոտ թեմա գրել*, կամ *բկին մնալ* դարձվածից՝ *գալիք օրվա կաղապարն անհայտության* բկին մնալ (ԳՊ, 21)՝ *սեր, հայրենիքի ազատություն՝ անհասկանալի պատճառով արգելակվել* ևն *շրջասույթը*: Երբեմն դժվար է սահմանազատել դարձվածն ու շրջասույթը՝ աստղերից սեր կաթել (ԳՊ, 33)՝ 1. *աստղալից երեկո լինել*, 2. *սիրելու տրամադրություն ստեղծվել,* (որն առիթ է տալիս դրանք երբեմն ոմանց կողմից չտարբերակելուն):

---

[1]Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարագյուլյան Թ. Ա., «Լեզվաբանական բառարան», Հայկ. ՍՍՀ ԳԱ հրտկչ., 1975 թ., 320 էջ, էջ 245:

[2]Խլղաթյան Ֆ. Հ., «Ոճաբանական բառարան» (II լրացված հրտ.), Զանգակ հրտրկչ., Ե., 2000 թ., 176 էջ, էջ 131:

[3]Խլղաթյան Ֆ. Հ., «Ոճաբանական բառարան» (II հր.), Զանգակ հրտկչն., Ե., 2000 թ., 176 էջ, էջ 150:

[4]Եզեկյան Լ. Կ., Ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրտկչ., Ե., 2003 թ., 376 էջ, էջ 16:

[5]Բեդիրյան Պ. Ս., «Հայերեն շրջասույթների բառարան», Էդիթ պրինտ հրտրկչ., Ե., 2006 2., 316 էջ, էջ 3:

[6]«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 4, ՀՍՀ ԳԱ հրտրկչ., Ե., 1980 թ., 828 էջ, էջ 75, Աղայան Է. Բ., «Արդի հայերենի բացատրական բառարան», Հայաստան հրտրկչ., Ե., 1976 թ., 1616 էջ, էջ 1110:

[7]Եզեկյան Լ. Կ., Ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրտկչ., Ե., 2003 թ., 376 էջ, էջ 190-194:

Շրջասույթը երբեմն ստեղծվում է բուն գեղագիտական հենքի (տեքստ) մտքերի հորդումից: Օրինակ՝ անուշ տառապանք՝ *սեր, սիրային ապրումներ, կարոտ*:

Դու ինձ այն գիշեր
այն աշխարհը տարար,
ուր մշտագո է սերը,
ու դեռ գոյություն ունի
հորդաբուխ սիրելու
տառապանքն անուշ: (ԳՊ, 33)

Նույնիսկ Կ. Հակոբյանն ուշադրության արժանի *բառը* նշել է ու նրան երբեմն հավելել անզուգական կառույց ունեցող *շրջասույթը*: Այսինքն՝ ընթերցողը ջանք չի թափում *շրջասույթի* շուրջ մտորելու, հասկանալու համար, այլ միայն սքանչանում է գեղագիտական բառարվեստի նվաճումով, որովհետև ծանոթ, սրտամոտ պատկեր է կառուցվում: Օրինակ՝ *աստղազարդերեկոյի* հոյակերտ գեղագիտական հակիրճ խոսքարվեստի արտահայտություն.

Երեկոն-*գեղեցկագույն տիկնոջ*
պարանոցի զարդ է… (ԳՊ, 34)

Հանրամատչելի, պարզունակ, բայց յուրաքանչյուրին ծանոթ հակադիր սեռերի զգայամոտ, ցանկալի տեսակցության ճշմարտացի նկարագրություն է *մեծ, միջակ ու փոքր* հասարակ *շրջասություններով* առլեցուն մեջբերվող կերտվածքը:

Բերանքսիվայր ընկած գավաթներ
Եվ անհրապույր *սենյակ ծխահամ*,
Վերջին փայլերն է արձակում արդեն
Շփոթված մոմի մի թախծող լեզվակ:
Հանգավ: Գիշեր է: Նոյեմբեր ամիս:
Իր *հնադարյան թախիծն է փռում*
Աշունն անհոգ,
Եվ *փլատակված մազերդ կրծքիս*
Մի անանցողիկ հուշ են լոկ կռում:
Հետո…չեմ հիշում, գիշեր էր երկար,
Եվ *պահն* այնպես *հեքիաթ* էր *թվում*,
Ու *ժամանակի տարածության* մեջ,
Այսպես ակամա,
Լոկ քո *հառաչն եմ ես մտաբերում*:
Հիմա՝ դիմում քեզ, ինչպես Աստծուն,
Ների՛ր, խնդրում եմ, մեղքերս ների՛ր,
Չէ՞ որ այս *կյանքի բարդ թոհուբոհում*
Լոկ մի *գիշեր էր տերը պարգևել*: (ԳՊ, 38, Ն, 52)

Շրջասությունների բառարանում ընդգրկված են *շրջասական կայուն կապակցությունները*[1], որոնք նաև հին ժամանակներից են ու համընդհանուր ճանաչում ունեն: Ցավոք, գեղագիտությունում նոր ստեղծվածները մնում են դուրս, իսկ լիակատար բառարան ստեղծելուն այդ բացակայությունը կվնասի (ցանկալի է յուրաքանչյուր հեղինակի շրջասույթներ առանձին բառարանով լիներ, որոնցից ընդհանուրը հանվեր):

Կ. Հակոբյանն ունի բանաստեղծություններ, որոնք առլեցուն են շրջասույթներով՝ «Ես» (ԳՊ, 21, նվիրված օրվան), «Դարձյալ» (ԳՊ, 22), «Հայրենիք իմ, Արցա՛խ» (Ն, 22), «Քեզ» (ԳՊ, 34) ևն, նույնիսկ պոեմի՝ «Գոյության պատրանքի» գլուխների մեծ մասը (ԳՊ, էջ 17, 18, 19, Ն, էջ 32, 33, 34) նույնպես առլեցուն են շրջասույթներով: «Հայրենիք իմ, Արցա՛խ» (Ն, 22) տասնհինգ

[1]Բեդիրյան Պ. Ս., «Հայերեն շրջասույթների բառարան», Էդիթ պրինտ հրկչ., Ե, 2006 թ., 316 էջ, էջ 6:

տողանոց բանաստեղծությունում տասը շրջասույթի գործածություն կա, որը գեղագիտորեն երբեմն մեկնաբանվել է հենց գործում: *Հույսի աստղ// հույսի աստղեր ծնվել* շրջասույթները՝ օրոցք-երեխա-*կյանք// կյանք լինել* բառերն են նշանակում, որը տրվել է հաջորդ տողերում՝ ….հույսի աստղեր են ծնվում// որոնց արձագանքն այստեղ// *օրորոցներ* են (Ն, 22, *օրորոց* այլաբերությունը նշանակում է *կյանք. օրորոց-երեխա-կյանք*):

Գեղագիտական կիրառությամբ որոշ շրջասույթներ ոչ միայն ճանաչողական նպատակ են հետապնդում, այլ նոր գիտաբառի գործածությամբ վերականգնում են նախնական հասկացությունների ձևավորման արդի վիճակը: Օրինակ՝ *հիշողության ցանց* (ԳՊ, 13) շրջասույթը *հիշողություն* է նշանակում (հիշողությունը մտքում՝ ուղեղի գալարներում, որը (հեղինակի կողմից 20 տարի առաջ) տեսածի, լսածի, պատերազմական դժոխայինն ընկալածի տեղադրումն է իր ուղեղում): *Ցանց* գոյականը հեղինակի ապրած ժամանակաշրջանում տեխնիկայի նվաճում *համակարգչային փոխմիացման*[1] հասկացություն էր նաև: Արդեն գեղագիտական կառույցում *նորարարության* գործածություն է դա շրջասության շրջանակում: *Նորարարական* նրբերանգային իմաստով խորացվել, բազմակողմանի է դարձվել *ռազմական դժոխային հիշողությունը*: Պատերազմական իրավիճակի ահազարհուրի հետ համատեղումով միայն ապշանք է պատճառում այսպիսի կառույցը: Ուրեմն՝ տեխնիկայի դարին հասու երիտասարդ ստեղծագործողը կարողացել է գեղագիտական կառույցի պատկերին ձուլել ու պատերազմական ահասարսուռ իրադրությունում լինող իր Արցախը ներկայացնել հեռու ընկերներին (երևանցի Դավիթ, Արթուր): Այս նույն բանաստեղծությունում էլի տեխնիկայի հետ կապված, բայց արդեն կես դար առաջ եղած նվաճում, *շարժասանդուղք* բառն է կիրառել *ժամանակ* բառի հետ՝ կերտելով յուրատիպ շրջասույթ՝ *ժամանակիշարժասանդուղք*: Դա նշանակում է *կյանք*: Ուրեմն, կարճ, հասարակ բառային բովանդակությունը հեղինակը գեղագիտական հաճելի շրջասությամբ է արտահայտում՝ խոսքը դարձնելով ախորժալուր հայերենի մարգարտաշար: Ահա ամբողջական գործը, որի բազմակետերի միջև եղած հինգ տողը միայն յոթ շրջասույթներ է ընդգրկում:

ԴԱՎԻԹԻՆ ՈՒ ԱՐԹՈՒՐԻՆ

Դուք ապրում եք
Առանց ցավի ու կարոտի,
Վայրկյանները երանության ապրելով
Ինձանից հեռու:
Թող *ժամանակիշարժասանդուղքը*
Ինձ կրկին հասցներ ձեզ մոտ՝
Նորից այն անքուն գիշերներին երգելու
Եվ հարբելու, գեթ հարբելու համար:
…Այստեղ՝ ցավի ու մահվան դաշտում
Ռումբերն ու արկերը
Թքում են արյուն,
Ու *հիշողության ցանցում* մեռնող
Ռոպեներից նվվում է երակս:
……
Ինձանից հեռու դուք ապրում եք
Նույն տարօրինակ ու պոետիկ վարքով: (ԳՊ, 13)

Այս հինգ տողում կան նաև ծավալուն շրջասույթներ՝ սերված իր մեջ ընդգրկված փոքրակառույցներից (այդպիսի ձևերը կարելի է օգտագործել Պ. Բեդիրյանի *կրկնակի*[2]

[1]«Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան», Ե., 2004 թ., 390 էջ, էջ 228:
[2]Բեդիրյան Պ.Ս., «Հայերեն շրջասությունների բառարան», Էդիթ պրինտ հրտկչ., 2006 թ., 316 էջ, էջ 7:

շրջասական հասկացության շրջանակներում): Ճանաչողական մեծ արժեք ունեցող այս բանաստեղծությունում *շրջասույթները* զուտ ռազմական իրադրության վարպետ արտացոլանքներ են (պատերազմին մասնակցողների ու խուսափողների հակադրությունը վարպետ քողարկումով է տրված, եթե այստեղ երիտասարդ ընկերոջն է խոսքը վերաբերում, ապա մանկական ընկերոջը ևս այդպես է հիշել «Վերհուշ» բանաստեղծությունը, Ն, 42): Ահա պատերազմական թեմային առնչվող *շրջասույթները՝* ցավի ու մահվան դաշտ՝ *կռվի տեղանք*, արյուն թքել// ռումբերն ու արկերն արյուն թքել՝ *վիրավորել/վել, սպանել/վել*, մեռնող բոպեներ՝ *անցնող ժամանակ և դրա հետ անցնող՝ վիրավորվող, մահացող ընկերներ*, երակը նվվալ՝ *լարումից, տառապանքից հոգնել*, հիշողության ցանց՝ *հիշողություն* (ամեն ինչ՝ ընկերների վիրավորվելը, մահանալը աչքի առաջ տեսնել, դժոխայինը հիշել), հիշողության ցանցում մեռնող բոպեներից երակը նվվալ՝ *ահազարհուր իրադրությունից, լարումից, ընկերների կորուստից տառապել, հոգնել*:

Գեղագիտական նյութում կիրառված հնչեղ *բառը* նաև հեղինակի կողմից *շրջասույթի* կառույցի զուգորդմամբ, նրբերանգային իմաստներով կոնկրետացվել, մեկնաբանվել, կարևորել է և մտքի կենտրոն դարձել: Այդ բառի իմաստի գեղագիտական *կրկնությամբ՝ շրջասությամբ, աստիճանավորել,* հնչեղացել է: Այն այս հենքում՝ տեքստում, շարահյուսորեն երկրորդական նախադասությամբ է կառուցվել: Օրինակ՝ լուսեղեն թագ (6, Ն)՝ *գալիք, Արցախի գալիք*:

Ես իմ հավատի միջից
կարկառված ձեռքս
հպում եմ քո *գալիքին*,
որ *լուսեղեն թագ* է (ԳՊ, 6, Ն, 23):

Կարող է բացահայտիչ լինել (բնագրում բացահայտչի բութ չի գործածվել)՝…որ նրանցից մեկը դառնում է քո *հիշողությունը*, մի *ճերմակ մտահույզ* (ԳՊ, 41, Ն, 54):

Շարահյուսական կապակցության որոշ բառային փոփոխություններ, ավելացումներ իմաստաբանորեն երբեմն կարող են շրջասությունները չփոխել, ինչպես՝ *տողերի տակ ընկած անցյալ* (18, ԳՊ)// տողերի տակ ընկած անցյալի *վերհուշ՝ գեղագիտական ստեղծագործություն, գրվածք,* տենչանքների շղթա// տենչանքների անդամալույծ շղթա (16, ԳՊ)՝ (*ստեղծագործական*) *երևակայություն* (անդամալույծն ուղղակի *խտացնում* է իրականի վերածելու անհնարինությունը), մի օր վարքը ծրարել (31, ԳՊ)// մի օր վարքը ծրարել որպես հիշողություն (31, ԳՊ)՝ 1. *դագաղում դնել*, 2. *ստեղծագործությունները գրքի վերածել* ևն: Սրանք հենց *կրկնակի* կոչված *շրջասույթներ* են, ինչպես նշեցինք վերևի տողերում, այսինքն՝ միևնույնի *տարբերակ*: Եթե այդ կառույցից սերվածն այլ խոսքի մաս է դառնում (գոյականից բայ, բայից գոյական), ուրեմն առարկայականից դառնում է փոփոխային ընթացական: Սա արդեն այլ շրջասույթ է ձևաբանական մակարդակում: Ձևաբանական փոխանցումները բառային համակարգում վաղուց են արժևորված, թեև Գ. Ջահուկյանը շարահյուսական մակարդակում երբեմն այդպիսի միավորներն ընդհանրացրել է (գիր-գրել): Օրինակ՝ տողերի տակ ընկած անցյալի վերհուշն *ապրել* (18, ԳՊ)՝ *ստեղծագործել* (նաև կարելի է ասել՝ *հիշել*): Այս *բայ շրջասույթի գոյականը* կլինի՝ տողերի տակ ընկած անցյալի վերհուշ//տողերի տակ ընկած անցյալ, կամ՝ կորուստների դագաղ (16, ԳՊ)՝ *պարապություն*, օրը կորուստների դագաղ *դառնալ* (16, ԳՊ)՝ *պարապ լինել* ևն:

Կ. Հակոբյանի գեղագիտական *շրջասություններում* ուշադրության արժանի են իմաստասիրական (փիլիսոփայական) միավոր *ժամանակի* հասկացության հետ կապված բառային կիրառությունները (ժամ, ժամանակ, բոպե, վայրկյան), ինչպես՝ անհոգության ժամ (Ն, 16)՝ *երիտասարդական զվարճություն, զրույց*, խելագար վարքի վայրկյան (Ն, 16)՝ *երիտասարդական պոռթկուն արարմունք*, ծխի հետ ներքաշել վայրկյանները գունաթափ (23, ԳՊ)՝ *անիմաստ ժամանակ*, ժամանակը ստվեր շտկել (ԳՊ, 12)՝ *կեսօր լինել՝ արևը զենիթում լինել*, ժամանակի տարածություն (ԳՊ, 38, Ն, 52)՝ *պահ*, ժամանակի շարժասանդուղք (ԳՊ, 13)՝

կյանք, մեռնող բոպեներ (ԳՊ, 13)՝ *անցնող ժամանակ,* ժամանակի փոշուց օրվա գորգերի հնանալը (21, ԳՊ)՝ *օրավուր կյանքի զարգանալը, փոփոխվելը* են:

Հեղինակի գործածած *շրջասություններում* նաև հեղինակային բնավորության, էության նրբերանգային *ինքնաբնութագրություններ* կան՝ Երազկոտ ու մոլոր (ԳՊ, 14, Ն, 30)՝ *բանաստեղծ*, տենչանքների անդամալույծ շղթա (ԳՊ, 16)՝ *ստեղծագործական երևակայություն*, մամռակալած քարանձավների սառույցը քամել շուրթերիս վրա (ԳՊ, 17)՝ 1. *խմել*, 2. *սթափ ներշնչվել, ստեղծագործել*, ներշնչանքի մեջ հառաչանքներն աչքերը խեղդել ու գրիչը արցունքներ թափել (ԳՊ, 17)՝ *թախծոտ թեմա ստեղծագործել* (Արցախի, հայության տխուր պատմությունը, այդ ժամանակի վիճակը, պատերազմը են), անապատների դեղին թախիծ (ԳՊ, 17)՝ *տրտմություն*, հառաչանքներն աչքերը խեղդել (ԳՊ, 17)՝ *ոչ մի նշանի արտահայտությամբսգալ, ներքուստ տխրել, ցավն արտաքուստ հաղթահարել ու ցույց չտալ,* քայլերը հանգավորել (24, ԳՊ)՝ *համաչափ քայլել* են:

Կ. Հակոբյանի գործածած *շրջասույթների* մեծ մասը լիարժեք *սերտ* է ու բառերն *ամբողջական* են *այլաբերված*: Օրինակ՝ երկնող ոգու անկում (16)՝ *չստեղծագործելը, հիասթափություն, վախճան*, անցյալի սմքած ստինք (18, ԳՊ)՝ *սիրոանցյալ*, բերանքսիվայր ընկած գավաթներ (38, ԳՊ, 52, Ն)՝ *անփութություն*, գոյության մասնիկ (ԳՊ, 19)՝ *արյուն, ողջություն*, գոյության մասնիկը եռալ (ԳՊ, 19)՝ *արյունը շարժվել, ողջ լինել*, գալիքաեռ երազով օծուն գավաթը պարպել (ԳՊ, 19)՝ *միանալ սիրածին, կենակցել* են:

Մտորումներով առլեցուն *իմաստասիրական* (փիլիսոփայական) «Ծխախոտ» բանաստեղծության սկզբում ու վերջում գործածված *օր* բառը տրված է նաև *շրջասույթներով* (ծխահամ օր՝ *հեղինակի կողմից ծխախոտ շատ գործածած օր, անգործ օր*, ծխախոտի ծխին օրն ագուցել՝ *շատ ծխել* ու քարշ տալ տաղտուկի միջով՝ *անհետաքրքիր լինել* են): Այս բանաստեղծության խոհադատողական, երբեմն էլ սոփեստության հասած *հաշմվածօրը չգոյությունից ավերվել* (ԳՊ, 26) շրջասությունը կրում է *օրն անօգուտանցկացնել՝ չստեղծագործել*, այսինքն՝ հեղինակը *շրջասությամբ* քննադատում է անգործությունը: Կյանքի փթթուն տարիքում տեսնել արցախյան պատերազմական իրավիճակը (և ընդհանրապես ոմանց համար էլ անգործ վիճակ, որոշ աշխատանքային տեղերի փակում) արդեն հեղինակին ոմանց մարդկային կյանքի վախճանի մասին են խորհել տվել՝ ներառյալ *մահ*, որն արդեն հասունացած, տարիքն առած մարդու դատողության նախանշան էր: Փթթուն տարիք ունեցող բանաստեղծը վերջում ընդհանրացրել է *շրջասությամբ*.

Ես վախենում եմ,
որ մի օր չլինեմ,
և օրս,
հաշմված օրս
ավերվի իմ *չգոյությունից*… (ԳՊ, 26)

Ահա այսպիսի մտորումներ ունենալն ու դրանք սոփեստական դառն *շրջասույթներով* արտահայտելը հեղինակի համար կյանքի գնահատման, արժևորման աստվածային տուրք էր: Այդպես է նաև «Մի օր» բանաստեղծությունը, որտեղ հեղինակը նաև այդ անցողիկությունը *շրջասույթից* բացի մեկտեղել է մեկնությանը՝ սիրածի ապագա գործունեությունը իր չլինելուց հետո՝ վարքը ծրարել (Ն, 46)՝ *հիշողությունը մի կողմ դնել*, ուրվականների ուղեկցությամբ հրեշտակների մոտ հասնել (Ն, 46)՝ *մահանալ*, անդերկրային առասպելների քահանա (Ն, 46)՝ *մտավորական ննջեցյալ*, (մահից հետո) խորանի պատերին ողջագուրվել, աղոթել (Ն, 46)՝ *անդրշիրիմվել*, աստվածները մարմինը ընծա առնել (Ն, 46)՝ *մահանալ, նահատակվել*, գահավիժման ընթացք (Ն, 46)՝ *ննջեցյալի հողին հանձնելը*, գահավիժման ընթացքին կտակել (Ն, 46)՝ *հողին հանձնել*:

Լեզվաբանական միավոր շրջասությունների հիմնական մասի բոլոր բաղադրիչների բառային իմաստներն *այլաբանորեն* փոխվում են՝ ներդաշնակ ստվեր (ԳՊ, 14)՝ *էություն*, օրը

կորուստների դագաղ դառնալ (ԳՊ, 16)՝ *պարապ լինել*, ափը ոչ կատարյալ մոմակալ (ԳՊ, 39, 53)՝ *ոչ հասուն, դեռ միակողմանի, անարձագանք սեր*, անդրսերյան տարիները չ/հիշել (ԳՊ, 47)՝ 1. *բուռն սիրել//սիրահարվել,* 2. *հիշողությունը թուլանալ*, լուսնի կաթնագույն հիշողություն (ԳՊ, 47)՝ *գիշեր*, չապրածի համար կյանքում չվճարել (ԳՊ, 37, Ն, 51)՝ *անիմաստ ազատ լինել*, *չհիշվել*, իմ ձեռքերից ծորացող ներշնչանքի ելևէջների մեջ մարմին թրթռալ (ԳՊ, 44, Ն, 58)՝ *սիրածին փայփայել, դրա շուրջը ստեղծագործել* ևն:

Հազվագյուտ է շրջասույթի որևէ բաղադրիչ նույն *ուղղակի իմաստով* պահպանվել՝ ցուրտ պարետատան ներքնահարկում դողալ//ով ծխել (*կրկնակի շրջասույթ*, ԳՊ, 37, Ն, 51)՝ *կալանավորված վիճակում լինել և ծխել* ևն: Դրանք Կ. Հակոբյանի գործածած շրջասույթներում հիմնականում սովորական իմաստով ընդգրկված գործուն բառեր են: Օրինակ՝ ծխահամ օր՝ *հեղինակի կողմից ծխախոտ շատ գործածած օր*, ծխախոտի ծխին օրն ագուցել՝ *շատ ծխել* ու քարշ տալ տաղտուկի միջով՝ *անհետաքրքիր լինել* ևն: Խոհադատողական երբեմն էլ սոփեստության հասած *հաշմվածորը չգոյությունից ավերվել* (ԳՊ, 26) շրջասությունը կրում է *օրն անօգուտանցնել* իմաստը, անհրապույր սենյակ ծխահամ (38, ԳՊ, 52, Ն)՝ *ուսանողական սենյակ,* սիրո լուսին (42, ԳՊ, 56, Ն)՝ *հասուն սեր* ևն:

Շրջասույթներն իրենց մեջ ընդգրկած բառերի քանակով, ծավալով տարաբնույթ են, որոնք կարելի է մոտավորապես խմբավորել երեք տեսակով՝ *մեծ, միջակ, փոքր*: Երբեմն մեծ շրջասույթն իր մեջ կարող է բովանդակել փոքրերը, ինչպես՝ մոմե լրջություն (34, ԳՊ)՝ *մեղմմտորումներ* և լուսե երազները մոմե լրջությամբ հանգչել (34, ԳՊ)՝ *պայծառ երևակայություն չլինել* (հեղինակի ապրած ուսանողական ժամանակ մեծ մասամբ էլեկտրական լույս չկար): Սրանք արդեն տարբեր շրջասույթներ են:

1. *Մեծ՝ ծավալուն,*շրջասույթները վեցից ավելի բառ են պարունակում, ինչպես՝ ժամանակի մրոտ թևերը լվանալ սուրբ մեռոնով (Ն, 6)՝ *քրիստոնեական հավատով կնքվել, վերականգնել հավատը*, հիշողության մատները թողնել թշվառ անցյալի զսպանակի մեջ (ԳՊ, 17)՝ *հիշել*, երակների ջրհեղեղի մեջ գոյության մասնիկ եռալ (ԳՊ, 19)՝ *սերունդ տալու հնարավորություն լինել*, (ծխախոտը վառել) անհոգության լույսի տակ և գունաթափ վայրկյանները ներքաշել ծխի հետ (ԳՊ, 23)՝ *ծխել*, փողոցների մութ հիշողությունից քո անունն օտարել (ԳՊ, 34)՝*չհիշել*, մատները…հեքիաթային տենդից կերոնների պես հալվել մարմնին (ԳՊ, 33)՝ *սիրել շոյելով, փայփայել* ևն:

2.*Միջակշրջասույթները* չորս-հինգ բառ են ընդգրկում՝ անվարժ թռչունի նման վանդակում թպրտալ (ԳՊ, 11)՝ *անհանգիստ լինել*, վայրկյանների արձագանքներում գալիքի սերմեր լինել (ԳՊ, 14)՝ *կյանք, սերնդատվություն լինել*, թմրության հաբը մի կողմ նետել (19, ԳՊ)՝ *աշխատել*, գալիքաեռ երազով օծուն գավաթը պարպել (19, ԳՊ)՝ *սուրճ պարպելով գուշակության պատրաստվել*, տառապանքի միջից հևոցներ հուղարկավորել երկինք (21, ԳՊ)՝ *թախծությունից հրաժարվել*, աստված ճանապարհը դեմը երկարել (29, ԳՊ)՝ *ապրել, ստեղծագործել*, բանաստեղծության ձեռագիրը ակվարիումի ձկներն ուտել (34, ԳՊ)՝*չլինել,* անհող տարածության մեջ ապրել (ԳՊ, 18)՝ *գեղագիտորեն աշխատել*:

3. *Փոքր կառույցիշրջասույթներ*, որոնք երկու-երեք բառ են ընդգրկում(սրանք իշխող են)՝ չգոյությունից ավերվել (ԳՊ, 26)՝*չլինել*, արքայություն չերազել (ԳՊ, 45, Ն, 59)՝ *համեստ լինել*, երակների ջրհեղեղ (19, ԳՊ)՝ *արյուն*, գոյության մասնիկ եռալ (19, ԳՊ)՝ *սերունդ տալու հնարավորություն լինել*, գրիչն արցունք թափել (ԳՊ, 17)՝ *թախծոտ թեմա ստեղծագործել*, տարօրինակ ու պոետիկ վարք (13, ԳՊ)՝ *արվեստագետի բնավորություն*, երկնող ոգի (16, ԳՊ)՝ *ստեղծագործող*, մահահոլի ինքնությունը փարատել (16, ԳՊ)՝ *զբաղեցնել, ոգեշնչել*, արարման հրաշք (19, ԳՊ)՝ *ստեղծագործելը*, հուշերգի ելևէջներ (26, ԳՊ)՝ *չափածո*, տողերը վկայակոչել (29, ԳՊ)՝ *բնագրային օրինակները կարդալ*, հիստերիկ գաղափար (30, ԳՊ)՝ *խորհրդային կարգերի ջատագովություն*, հիշելուց արյունը ցավել (34, ԳՊ)՝ *կարոտել,* սերը բառընդերքում տաքանալ (ԳՊ, 36, Ն, 50)՝*ցուրտ սենյակում սիրո մասին ջերմ գրել* ևն:

Այժմ փորձենք այդ *շրջասույթները* լեզվաբանական որոշակի *խմբավորումներով* ներկայացնել:

Կ. Հակոբյանի ստեղծագործություններում կիրառված շրջասույթները բառագիտական *իմաստաբանական* արժեքներով ունեն *հոմանշություն,հականշություն, նույնանություն կամ համանունություն* (նախավերջինն ու վերջինը համեմատաբար քիչ են, իրար կից կիրառությունները սակավ են լինում): Ձևաիմաստաբանական *հոմանիշը* շրջասույթների արտահայտության դիտվածքում (պլան) փոխաբերված են *համանիշներով* ու *նույնանիշներով*: Այլ բառերի նշույթներով ձևավորված այդ շրջասույթները հստակ են և գործածված են հիմնականում տարբեր գործերում:

Համանիշ-Շատ է կիրառված *սիրելուն* վերաբերող գոյական, բայ շրջասույթները՝ *սեր, սիրել,* ուստի դրանց շարքերն ավելի բազմաքանակ են (դա բնական էր երիտասարդ սիրահար բանաստեղծին): Օրինակ՝ անվարժ թռչունի նման վանդակում թպրտալ (ԳՊ, 11)՝ *սիրել, գուրգուրել*// հրեշտակների մույկեր հագած գիշերն այցելել ու բարձը կիսել (ԳՊ, 44, Ն, 57)՝ *սիրել, երազում սիրածին հանդիպել*// երջանիկ անգիտությամբ փարվել (ԳՊ, 44, Ն, 58)՝ *շոյել, սիրել*// ապրած-չապրած կյանքում կորցրած հույսերը վերադարձնել (ԳՊ, 44, Ն, 58)՝ *նորից սիրել*-ձեռքերից ծորացող ներշնչանքի ելևէջների մեջ մարմին թրթռալ (ԳՊ, 44, Ն, 58)՝ *սիրել, փայփայել*// լուսե պարանոցին փարվել (ԳՊ, 43, Ն, 57)՝ *սիրել, գուրգուրել*// լուսաշողերից հունցված անմեղ մարմնին հպումներ կրել (ԳՊ, 43, Ն, 57)՝ *սիրածից փայփայվել, սիրել* //փոթորիկ մարմինը փռել նեղ սենյակի խեղճուկրակ մահճակալին (ԳՊ, 45, Ն, 59)՝ *սիրել* //փշրված գիշերներն ամբողջանալ (ԳՊ, 45, Ն, 59)՝ *սիրել,* կորած հույսերից մեկը (ԳՊ, 43, Ն, 57)՝ *սեր*// փոթորիկ մարմին (ԳՊ, 45, Ն, 59)՝ *սեր*// անուշ տառապանք (33, ԳՊ)՝ *սեր*// անզուսպ գիշերվա հիշողություն (33, ԳՊ)՝ *սեր*//լուսնի կաթնագույն հիշողություն (33, ԳՊ)՝ *սեր* //սիրո լուսին (42, ԳՊ, 56, Ն)՝ *հասուն սեր*: Ուրիշ իմաստով համանիշ շրջասույթների շարքերը սակավաքանակ են, ինքպես՝ երակների ջրհեղեղ (14, ԳՊ)՝ *կենսալից արյուն, ողջություն, կյանք* //գոյության սերմեր (14, ԳՊ)՝ *կյանք*// նախնիների գոյատենչ արյուն (Ն, 22)՝ *կյանք* //հույսի աստղեր (Ն, 22)՝ *կյանք*, սիրո լուսինն աղոտանալ, չքանալ երկնքից (42, ԳՊ, 56, Ն)՝ *չսիրել* //ներկա սերը հուշ դարձնել (40, ԳՊ, 54, Ն)՝ *չսիրել* ևն:

Նույնանիշ-«Ծննդավայր» բանաստեղծության սկզբում ու վերջում գործածել է մեկ բառի տարբերությամբ *հիշել* բովանդակությունը պարունակող նույնանիշ շրջասույթները: Կ. Հակոբյանը ծնվել է *լեռնային* տեղանքում, ուստի այդ բառի նշմամբ *մանկությանը* հոմանիշ է դարձրել՝ *մանկության* դռնով ներս մտնել// *լեռների* դռնով ներս մտնել (Ն, 14)՝ *մանկությունը հիշել*: Ահասարսուռ *պատերազմ*, *մահ* իմաստ ունեցող շրջասույթներ՝ եղեռնաշունչ օրվա երախ (ԳՊ, 7)՝ *պատերազմ*, *մահ*, Հեղձուկ վառոդի հոտ (5, Ն)՝ *պատերազմ*, *մահ*, տագնապոտ օրերի երախ (Ն, 22)՝ *պատերազմ, մահ,* լեռնացող երազ (Ն, 22)՝ *հայրենիք, Արցախ*//կորստյան մոխիրներց կարկառված քարեր (Ն, 22)՝ *հայրենիք, Արցախ*, անդունդի մեջ հասունանալ (21, ԳՊ)՝ *զարգանալ*// գալիքի հիմքը դնել անցյալի մաշված հետքերի վրա (21, ԳՊ)՝ *զարգանալ*, խորության վայրենի ուղեծիրն ընկղմել (23, ԳՊ)՝ *անհավատալին կատարել*// ջրերը հրդեհել (23, ԳՊ)՝ *անհավատալին կատարել*// առասպել դառնալ (23, ԳՊ)՝ *անհավատալին կատարել*, հիշողության պարանները ձգվել (27, ԳՊ)՝ *հիշել*//մանկության ոտնահետքերը կնքել (27, ԳՊ)՝ *մանկական ժամանակների վերաբերյալ հիշողություններ արթնանալ,* տառապանքով վերծանվել (29, ԳՊ)՝ *ստեղծագործել*// տառապանքե թագը կռել (29, ԳՊ)՝ *ստեղծագործել՝ բանաստեղծել*// փիլիսոփայել ԱՆՀԱՅՏի մասին (ԳՊ, 12)՝ *վերացական ստեղծագործել*, ինքնությունը զննել (ԳՊ, 29)՝ *ստեղծագործությունը կարդալ*//տողերը վկայակոչել/վել (ԳՊ, 29)՝ *ստեղծագործությունը կարդալ,* հուշերը փողոցից վաղուց ավլել (36, ԳՊ, 50, Ն)՝ *մոռանալ*//փողոցների մութ հիշողությունը օտարել (34, ԳՊ)՝ *մոռանալ* ևն:

Հականիշ՝ կարծրացած քարերի փոշին սրբել (ԳՊ, 9)՝ *հարատևել*-վերից հսկել (Ն, 9)՝ *մահացած լինել*, հիշողության ցանցում մեռնող բոպեներ (13, ԳՊ)՝ *անցյալ*-լուսեղեն թագ (6,

Ն)՝ *գալիք*, անցած սերերի շարքն ավելացնել մեկով (40, ԳՊ, 54, Ն)՝ *նորից ուրիշի սիրել*- ժամանակի կոպից անցած սերերի շարքը կախված մնալ (40, ԳՊ, 54, Ն)՝ *չմոռանալ նախորդ սերերը*, անցյալի սմքած ստինքին հպվել (18, ԳՊ)՝ *հիշել*- հուշերը փողոցից վաղուց ավլել (36, ԳՊ, 50, Ն)՝ *մոռանալ*//փողոցների մութ հիշողությունը օտարել (34, ԳՊ)՝ *մոռանալ*: *Նույնանուն*՝ մահահղի մենություն (ԳՊ, 16)՝ 1. *սիրածի մոտ չլինելը*, 2. *չստեղծագործելը*, մահահղի մենությունը փարատել (ԳՊ, 16)՝ 1. *սիրածի մոտ լինել*, 2. *ստեղծագործել*, աստղային մահ (ԳՊ, 20)՝ 1. *լուսանալը*, 2. *աստղ ծորալը*, անձեռակերտ հուշերի խորք (18, ԳՊ)՝ 1. *սիրոանցյալ*, 2. *հիշարժան պատմություն*, խորության վայրենի ուղեծիր (ԳՊ, 23)՝ 1. *խորք*, 2. *վտանգավոր գործ, մտադրություն*, մի օր վարքը ծրարել որպես հիշողություն (ԳՊ, 31)՝ 1. *դագաղում դնել*, 2. *ստեղծագործել, գրքի վերածել* ևն:

Շրջասույթները տարբեր խոսքի մասերի արժեքով են: Դրանք հիմնականում ձևաբանական իմաստավորումը ձեռք են բերում գերադաս անդամի շարահյուսական մակարդակում և *գոյականի* ու *բայի* սահմաններում են (երբեմն բնութագրություններում միայն առարկան, երևույթն են նշում):

Գոյական՝ երակների ջրհեղեղ (ԳՊ, 1)՝ *արյուն*, նախապապի հողեղեն վարք (ԳՊ, 6)՝ *հավատացյալ աշխատավորի կյանք ու սովորույթ, գյուղատնտեսական աշխատանք*, գոյության արմատ (ԳՊ, 6)՝ *հավատ*, կյանքոտ հառաչանք (6)՝ *վիրավոր, մահամերձ զինվորի ձայն*, առավոտվող օր (ԳՊ, 7)// աստղային մահ (20, ԳՊ)՝ *լուսաբաց*, նահատակների լեզու (լեզվով, ԳՊ, 7)՝ *հայերեն*, հնդկահավի ներկայացում (Ն, 14)՝ *պչրանք*, հույսի աստղեր (Ն, 22)՝ *կյանք*, ապստամբ մտքեր (21, ԳՊ)՝ *իրականությանը չհարմարվելը*, անցյալից բռնաբարված հետքեր (21, ԳՊ)՝ *արգելված գաղափարներ*, մատների հիշողություն (ԳՊ, 33)՝ *սիրո զգվանք*, խավար անդաստանում հանգերգող լույս (ԳՊ, 39, Ն, 53)՝ *բանաստեղծ*, գիշերվա ափում մոմի թախծող լեզվակ (ԳՊ, 39, Ն, 53)՝ *համեստ սիրահար* ևն:

Բայ՝ հեղձուկ վառոդի հոտով հեղվել (5, Ն)՝ *պատերազմ լինել*, կրակել չափածո (3, ԳՊ)՝ *բանաստեղծելով կռվել*, գրիչն ու ավտոմատը շփոթվել (3, ԳՊ)՝ *մտավորական՝ գրող պատերազմում լինել*, եղեռնաշունչ օրվա երախում մաքառել (ԳՊ, 7)՝ *Արցախի գոյապայքարում լինել*, կոխկրտել բնությունը (բնույթը, բնավորությունը, ԳՊ, 11)՝ *սովորության հակառակ գործել*, ցավի ու մահվան դաշտ (13, ԳՊ)՝ *պատերազմ*, ռումբերն ու արկերն արյուն թքել (13, ԳՊ)՝ *պատերազմի զոհեր լինել*, ծարավ մարմինը՝ գոյաձևը թրջվել (24, ԳՊ)՝ *անձրևի տակ ընկնել*, բաժակից հուշեր քամվել (Ն, 17)՝ *սուրճի բաժակից գուշակել*, գրիչն արցունք թափել (ԳՊ, 17)՝ *տխուր թեմայով ստեղծագործել*, հիշողության մատները թողնել թշվառ անցյալի զսպանակի մեջ (ԳՊ, 17)՝ *հիշել*, երակների հիշողությունը չհատվել (ԳՊ, 17)՝ *սերնդատվության արյունը շարունակվել*, հնի ու նորի առեղծվածներում ձևեր զննել (ԳՊ, 18)՝ *ստեղծագործել*, անհող տարածության մեջ ապրելու պատրանք որսալ (ԳՊ, 18)՝ *գեղագիտական աշխատանք կատարել*, (սիրո) կորուստները հաշվել (ԳՊ, 18)՝ *հիշել*, ճախրանքի համար ծնվել (21, ԳՊ)՝ *ստեղծագործող լինել*, բանականության ծանր բեռներ կրել (21, ԳՊ)՝ *ողջախոհ լինել*, ապստամբ մտքերը ներսը կրծել (21, ԳՊ)՝ *իրականությանը չհարմարվել*, անհոգության լույս (23, ԳՊ)՝ *ծխախոտի համար կրակ վառելը*, հիշողության տառապանքով վերծանվել (ԳՊ, 29)՝ *ստեղծագործել*, լուսնոտի նման զգալ (40, ԳՊ, 54, Ն)՝ *ոչ լուրջ ընկալել*, վաղանցիկ սիրո վախճանը վայել (ԳՊ, 42, Ն, 56)՝ *ափսոսալ ավարտված սերը*, գիշերվա ափի մեջ սեղմվել (ԳՊ, 42, Ն, 56)՝ *գիշերը դրսում սիրածի հետ գրկվել* ևն:

Եթե Գ. Սարյանը «Ծխախո՛տս» բանաստեղծությունում անձնավորել է գլանակը, կիսվել հետը՝ ինքնամփոփությամբ նմանեցնելով իրեն (Ծխախո՛տս, այրվում, վառվում ես// Ինքդդ քեզ, ինչպես ես…) առանց շրջասության կիրառության, ապա Կ. Հակոբյանը քնարական ինքնազրույց պարունակող «Պատրանք» բանաստեղծության երկրորդ տան անձավորած գիշերից թույլտվություն է հայցել ծխախոտը վառելու, նյարդերը հանգստացնելու համար: Մանրամասնված *շրջասությամբ* այդ կառույցը անհարիր թվացող բառերի նկարագրությամբ

գեղագիտական յուրատիպ պատկեր է՝ ծնված մթության ազատությունում՝ անհոգության լույս (23, ԳՊ)՝ *լուցկուց վառված կրակ*, ծխի հետ ներքաշել վայրկյանները գունաթափ (23, ԳՊ)՝ *անիմաստ ժամանակ ծախսել*: Ուրեմն, նյարդեր հանգստացնող ծխախոտը քնարերգուների, նյարդացածների զրուցակիցը դառնալով, հասարակության կողմից ճանաչվում են որպես զորավոր դեղահաբ: Եվ ահա Կ. Հակոբյանն ինքնատիպ կառույց ունեցող այդ գործում, ամբողջականորեն սոփեստ հնգատող տան մանրակաղապարներում յուրօրինակ հետաքրքրություն է ստեղծել, ազատ պահը գեղագետը մարդկային տրամաբանական մտուրումների է ենթարկել: Այդտեղ նաև յուրաքանչյուր տան կենտրոն գոյական առաջին բառից հետո կիրառված է բազմակետեր՝ …….., այսինքն՝ *լռություն*՝ խոսք, ասություն[1] (չգրված բառեր), որոնք էլ, ըստ իս, հեղինակի համար իրենց հերթին յուրատիպ շրջասույթներ են:

Գիշեր …….
ծխախոտս թող վառեմ
անհոգության լույսի տակ
ու *ներքաշեմ ծխի հետ*
վայրկյանները գունաթափ: (ԳՊ, 23)

«Կոմիտասնաչք է բացել քերթվածքներ հորինողների հողում…Նրա հայրական տանպատից ճառագում է Ստ. Ներսիսյանի՝ Մեսրոպ Մաշտոցի հանրահայտ լուսաճաճանչ նկարը՝ հայոց հրաշքը, այն է՝ արյուն չթափած ու հայապահպան 36 քաջազուն զինվորներն արարելիս: Այդ նկարով տոգորված երիտասարդի ուսումնատենչ հոգին մնաց երկնի անհունում»[2]՝ մեզ հավերժելով հայ բանարվեստումնոր շունչ համարվող *շրջասույթները*:

Այսպիսով՝ Կ. Հակոբյանի ստեղծագործություններում նշանակալից տեղ գրավող *շրջասույթները* իրենց կիրառական բազմազան արժույթներով լեզվաբանական լուրջ քննության պահանջարկ ունեն:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Սիլվա Մինասյան-բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail:silvaminasyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1]Փոլադյան Միշել, «Լեզու և գրականություն», Նոր-դար Զանգակ հրտկչ., Ե., 1998 թ., 96 էջ, «Լռություն», էջ 51-54:

[2]Մինասյան Ս. Ա., «Հատուցվում է արժանին», Լուսաբար (թերթ), N 12 (12-31, V), 2004 թ.: